

ԲԱՐԱԿԱՑԱԻ—ԹՈՔԱԽՏԸ

Նորերումն բժշկ. դօքտօր Ա. Բաբայեանը հրատարակեց իւր մի դասախոսութիւնը՝

ԲԱՐԱԿԱՑԱԻ—ԹՈՔԱԽՏԸ. տարափոխիկ (գիտչող) հիւանդութիւն է: — Նորա տարածման առաջն առնելու միջոցները: — Հրապարական ընթերցանութիւն և կայսերական կովկասեան Բժշկական Ընկերութեան 25-ամեաց յօրելեանը տօնելու օրւայ հանդիսաւոր նիստումը 1889 թւի, ապրիլի 12-ին: — Թարգմանեց Լևոն Մելիք-Ազամեան՝ հեղինակի խմբագրութեամբ: Հրատարակութիւն կայսերական կովկասեան Բժշկական Ընկերութեան:

Հրապարակախօսը իւր ճառի առարկաց է ընտրել թոքախոփ տարափոխիկ լինելու խնդիրը, որը այժմ յուզում է ոչ միայն գիտնականներին, այլ և քաղաքակիրթ ազգերի վարչութիւններին, որոնք զանազան կարգադրութիւններ են անում բարակացաւի տարածման առաջն առնելու համար:

Ճառախօսը շատ տեղերում կրկնութիւններ է անում. միջանկեալ պատմութիւնները մթնացնում են գլխաւոր խնդիրը. նոյնպէս աւելորդ է, մեր կարծիքով, կուրօրանների կամ բարակացաւի բժշկւելու մասին խօսելը, որով նա շեղւում է իւր գլխաւոր առարկացից: Ժողովրդեան համար գրողը միշտ պէտք է խոյս տայ աւելորդաբանութիւնից: Կարդալու չընտելացած մարդը երկարաբանութիւն չի սիրում, նրան հարկաւոր են պարզ, ազդու և կարճառօտ գրւածներ: Զը նայելով այդ պակասութիւններին, ճառախօսը իւր ընտրած խընդրի վերաբերութեամբ գիտութեան վերջին խօսքը լիովին ամփոփել է իւր ճառի մէջ՝ որի գլխաւոր պարունակութիւնը հետեւալն է.

Հիմնւելով Ռոբերտ Կոխի գիտնական հետազոտութիւնների վե-

րայ, բարակացաւի պատճառը համարում է բացիները, որոնք գործնաւում են հիւանդների խորիս մեջ։ Աչքի առաջ ունենալով կօրնեի և նիւխների վերջին ժամանակաց զիտնական դիտողութիւնները՝ ապացուցած է համարում, որ հիւանդութիւնը տարածւում է շորացած խորիս միջոցով, որը փոշիանալով և իւր մեջ պարունակելով բիւրաւոր բացիներ, մտնում է ուրիշների թոքերի մեջ և վարակում է նոցա։

Երկրորդ աղբիւրը հիւանդութեան տարածւելու ընդունում է կերակուրը, այն է՝ թոքախոռով հիւանդ կենդանիների միալ և գոհարացաւով հիւանդ կովի կաթը, որովհետեւ կովերի գոհարացաւը համապատասխանում է մարդկացին թոքախտին։

Հիւանդութիւնը ուղղակի կարող է հիւանդից անցնել նորա շրջակացքում գտնւած առողջների վերաց, կամ կարող է բնակարանի միջոցով տարածւել, երբ առողջը հիւանդից յետոյ բնակւում է նորա սենեակում, կամ կարող է տարածւել իրեղինների միջոցով հագուստին, ականջի օղերի և այլն։

Ճառախօսը մեջ բերելով այն փաստը, որ հիւանդութիւնը տարափոխւելուց յետոյ, մի քանի ամիսներից, մինչև անգամ տարիներից յետոյ է երևան գալիս, ուստի և ժողովուրդը կարծում է, որ թոքախոռը տարափոխիկ չէ։ Միայն նմերեթիացում (և մենք կ'աւելացնենք՝ նուալիացում) բարակացաւը տարափոխիկ է համարում։

Բարակացաւի ժառանգականութիւնը ընդունւառում է այն մտքով, որ մարդս ժառանգում է միայն տրամադրութիւնը և, յաջող պայմանների մեջ, հիւանդութիւնը կարող է գոյութիւն ստանալ։ Հետաքրքիր է իմանալ, արդեօք նորածինների թոքախոռը վեց շաբաթւաց հասակում կամ սակրների տուբերկուլոզը երեք շաբաթւաց հասակում ժառանգականն է համարում ճառախօսը, թէ ստացական։

Բարակացաւի տարածման առաջն առնելու համար՝ մատնացոց է անում, որ հիւանդի խորին է վտանգաւոր. երբ նա ցամաքում է, դառնում է փոշի, բարձրանալով սենեակի օղի մեջ, նստում է յատակի, կահկարասիքի և ուրիշբաների վերաց և ապա մտնում է շրջապատողների թոքերի մեջ։ Ուստի նա ատաջարկում է, որ այն տներում, ուր թոքախոռով հիւանդներ կան, ամեն առաւօտ յատակը մաքրեն թաց շորով և որ այդպիսի սենեակներից սրբած բոլոր

կեղան և փոշին ամենեին չը թափւին գաւիթների մէջ կամ փողոցը, այլ ուղղակի այրւեն: Ու մէկ դէպում բարակացաւով — թոքախտով հիւանդները չը պէտք է թքեն յատակի վերայ, թաշկինակների մէջ կամ գորգերի վերայ (մենք կ'աւելացնենք՝ և պատերի վերայ), այլ միայն հասարակ ջուր ածած ածանաղին լայն հողէ ամանների մէջ: Օրը մի քանի անգամ պէտք է այդ ամանները դատարկեն կողուղիների կամ արտաքնոցների անցքերի մէջ, ուր թոքախտացին բացիները անշուշտ կ'ոչնչանան և ապա նորից ջուր ածել և դնել հիւանդների մօտ և նրանց սենեակի զանազան մասերում:

Հիւանդների սպիսակեղէնը (լուցոց) առանձին ժողովել, մասնաւանդ թաշկինակները, որոնք չը պէտք է թողնել գրպանում մինչև խորխի չորանալը, հարկաւոր է առանձին լւանալ և հիւանդի բոլոր լւացքը գոնէ երկու ժամ եփ տալ ջրի մէջ:

Նատ վնասակար և վտանգաւոր սովորութիւն է թոքախտով կամ այլ վարակիչ հիւանդութիւնով մեռածների շրերը խեղճերին ընծացելը. աւելի լաւ է, մեր կարծիքով, այրել նոցա, իսկ եթէ ո՛չ, ինչպէս ճառախօսը առաջարկում է, հարկաւոր է երկար ժամանակ եփ տալ ջրի մէջ և ապա գործ ածել:

Ուր հիւանդը ապրել է կամ մեռել է, այն սենեակի յատակը, առաստաղը և պատերը, նոյնպէս և մեծածաւալ իրեղէնները պէտք է սպիտակ կամ սև հացի միջուկի մեծ մեծ կտորներով սրբել և ապա մաքուր ջրով լւանալ, կամ, եթէ հնար կայ, սրսկել $5^{\circ}/\text{o}$ կարբովի թժեւով:

Կերակուրների մասին ճառախօսը խորհուրդ է տալիս, որ կովի կաթը առաջ եփ տան և ապա գործ ածեն, նմանապէս կովի, համի և խոզի միսը կիսաեփ կամ հում խորոված գործ չը դնեն:

Առքա են այն զիսաւոր կանոնները, որոնք ճառախօսը առաջարկում է հասարակութեանը թոքախտի տարածման դէմ մաքառելու համար:

Ի դէպ ենք համարում այսոեղ մէջ բերել հետևեալը. նախ, որ Բերլինի ոստիկանապետը նորերումն հրաման ուղարկեց խելագարների համար հիմնւած մասնաւոր հաստատութիւններին հետևեալ կանոնները գործադրելու, որոնք հիմնւած են գօքաօր Գէորգ Կօրնէի

հետագօտութիւնների վերաց և որոնց նպատակն է բարակացաւի տարածման առաջն առնելլը:

1. Բարակացաւով հիւանդներին միւս հիւանդներից բաժանել և առանձին զետեղել:

2. Խստիւ հսկել, որ նոքա իրանց խորխը թքեն մի անօթի մէջ, որի յատակը սակաւ ջրով ծածկած է: Այդ անօթները օրը գոնէ մի անգամ հարկաւոր է եռացող ջրով մաքրել, բոլոր պարունակութիւնը արտաքնոց ածել: Յատակի, սկառերի և նստարանների ապականութիւնները որչափ կարելի է շուտով եռացող ջրով կամ այլ ճանապարհով մաքրել. ապականած անկողնի կամ այլ լւացքը հեռացնել և եփ տալ:

3. Անկողնակալների, վերմակների և այլ գործածական իրեղէնների հետ, որոնք գործ են ածել բարակացաւուները, վարւել ըստ կանոնի ոստիկանական հրամանի փետրարի 7-ից, 1887 ամի:

4. Նոյնպէս մաքրել, այդ կանոնին համեմատ, այն սենեակները, ուր բարակացաւուները պառկած են եղել:

Երկրորդ՝ ֆրանսիական հանրապետութեան նախագահը յուլիսի 28-ին, 1888 ամի, իւր դեկեմբերի հրամայեց՝ տաւարի և խոզերի թոքախտը տարափոխիկ հիւանդութեան շարքում համարել և հետևեալ կանոնները գործադրել. —

1. Եթէ տաւարը բարակացաւով հիւանդ գտնւի, պրեֆեկտի (հականգողեալ) հրամանով, կենդանիները բժշկի հսկողութեանը ենթարկեն:

2. Եւրաքանչիւր բարակացաւոտ կենդանին պէտք է միւսներից բաժանւի ու փակւի և միայն մորթելու կամ ոչնչացնելու նըպատակով հեռացւի: Կենդանիներին մորթել հարկաւոր է բժշկի հսկողութեան ներքոյ. բժիշկը պէտք է կենդանու մարմինը հետազոտի, և հինգ օրւաց ընթացքում պրեֆեկտին զեկուցում ուղարկի:

3. Բարակացաւով հիւանդ կենդանու միսը գործածելը արգելում է այս դէպքերում:

ա. Եթէ հիւանդութիւնը ընդհանրացած է, այն է եթէ հիւանդութիւնը միմիայն փորոտիների և նոցա աւշեաց անօթների վերաց չէ գտնւում:

բ. Եթէ հիւանդութիւնը, թէև սահմանափակւած է, բայց

փորոտիքի մեծ մասը վարակել է կամ տարածւել է կրծքի վերայ կամ փորի մշջ:

Գործածութեան համար արգելած միսը և տուրերկուլոզական փորոտիները չը պէտք է կենդանիների համար իրեւ կերակուր գործ ածել, այլ հարկաւոր է ոչնչացնել:

դ. Կաշին պէտք է առաջ անվասս անել, ըստ կանոնի, և ապա գործ ածել:

դ. Թոքախտով հիւանդ կովերի կաթը ծախելը արգելած է. սակայն այդ կաթը, նոյն իսկ տեղում եփ տալուց յետոյ, կարելի է գործ ածել կենդանիներին կերակրելու համար:

Բժշկ. դօքտոր Գր. ԳԱՍՊ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ (Պղլարցի):

ՆՈՐ ՍՏԱՑԻԱՆ ԳՐՔԵՐ

- 1) ՊՌՈՇԵԱՆՑ ՊԵՐՃ.—ՑԵՑԵՐ, վէպ: Ալոտատպած «Մուրճ» ամսագրից. Թիֆլիս, տպար. Ռոտինեանցի, 1889 թ., գիմն է 1 բուրլի.
- 2) ԿՈՅԸԱԽ ՀԱՅԹ. Վիեննակի Միսիթարեան Ուխտից:—ԲԱՌԴԻՐՔ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ. Վիեննա, 1889 թ., տպ. Միսիթարեան Ուխտի.
- 3) ԱՇԼԳ ԶԻՒԱՆ:—ՔԵԱՐԱՄԻ և ԱՍԼԻԻ ՀՅԱՅԻԱԹԸ հանդերձ երգերով. Փոխադրութիւն տաճկերէնցից. Հրատարակութիւն Գ. Սանովեանցի. Ալեքսանդրոսոլ, տպար. Անդովեանցի, գրաշար Բուեաճեանց, 1888 թ..
- 4) ԽԱՐԱՁԵԱՆՑ ԳԵՈՐԳ:—ՆԺԴԵՆՀԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ: Ոտանաւորներ և երգեր. Գիրք Ա., Թիֆլիս, տպ. Վարդանեանցի.
- 5) ԲԱՐԽՈՒԻԳԱՐԵԱՆՑ ԳԵՈՐԳ:—ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԴԻԿ: Առակ չափահաների համար. Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի. 1889 թ..